ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊՐՈՒՄԱԿՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Յայլոյան Ա. Վ.

Գյումրիի Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

Գրիգորյան Ն.Պ.

Գյումրիի Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և սոցիալակա ն աշխատանքի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցականներ, հատուկ շտկողադաստիարակչական հնարներ, փոխօգնություն, ապրումակցել, բարոյաէթիկական չափանիշ, ներառական և մասայական նախադպրոցական հիմնարկներ:

Աճող սերնդի համակողմանի զարգացման, ուսուցման, դաստիարակության, կյանքին և աշխատանքային գործունեությանը նախապատրաստելու հիմնահարցերը մշտապես դիտվում են որպես յուրաքանչյուր պետության տնտեսական և սոցիալական (հասարակական) զարգացման բաղադրամաս:

Ելնելով ողջ կրթական համակարգի համալիր մոտեցման գաղափարից, առանձնակի նշանակություն են ձեռք բերում զարգացման շեղումներ ունեցող, մասնավորապես մտավոր հետամնաց երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերը: Այստեղ խիստ արդիական է դառնում այս երևույթի բարոյական դաստիարակության գործընթացի կատարելագործումը:

Հատուկ ուսուցման և դաստիարակության տեսական ու գործնական ուսումնասիրություններում մտավոր հետամնաց երեխանների բարոյական կերպարի ձևավորման ուղիները սերտորեն կապված են նրանց անձնավորության զարգացման հետ: Դիտարկելով դպրոցականների անձնավորության զարգացման խնդիրը տարբեր տեսանկյուններից (Գ.Ն. Դուլևև, Ս.Գ. Երյոմենկո, Ն.Լ. Կոլոմինսկի և այլոք) նշում են մտավոր հետամնաց երեխայի բարոյական զարգացման մի շարք առանձնահատկություններ: Այս երեխաների մոտ նկատվում են բարոյաէթիկական հասկացությունների ոչ բավարար իմաստավորում, բարոյական արժեքների ձևավորման դժվարություններ, դրանք իմանալու և վարքագծում կիրառելու անկարողություն, վարքի գիտակցման կարգավորման անբավարարություն:

Այս ամենի հետ մեկտեղ, մի շարք հետազոտություններում (Տ. Ա. Վլա-

սովա, Մ.Գ. Մորոզովա, Մ. Ս. Պևզներ և այլք) արտահայտվում են լավատեսական կարծիքներ մտավոր հետամնաց երեխաների բարոյական զարգացման հնարավորությունների մասին: Որպես այդ հնարավորությունների իրականացման հիմնական պայման, գիտնականները նշում են նաև նման տեսակի խանգարումների վաղաժամ շտկումը:

Մտավոր հետամնաց երեխաներին ինքնուրույն կյանքին նախապատրաստելու նպատակով վաղ դաստիարակչական ներգործության արդյունավետությունը հաստատում են շտկողական մանկավարժության Գ. Հ. Ի-ի լաբորատորիայի աշխատակիցների փորձարարական հետազոտությունները (Ա. Ա. Կարաևա, Գ. Վ. Կուզնեցովա, Ն.Գ. Մորոզովա և այլն): Այս հետազոտությունների արդյունքում ստացվել են տվյալներ մտավոր հետամնաց նախադպրոցականների անձնավորության զարգացման յուրահատկության մասին և հիմնավորել է անհրաժեշտությունը կիրառելու հատուկ շտկողադաստիարակչական հնարներ՝ նրանց մոտ ձևավորելու ճիշտ հարաբերություններ շրջապատի մարդկանց հետ և բնավորության դրական գծեր: Սակայն մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական դաստիարակության հիմնախնդիրների մեծ մասը չի դարձել հատուկ փոնարարական հետազոտության առարկա և կարիք է զգացվում հետագա ուսումնասիրությունների:

Վերը նշված հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել այս աշխատանքի արդիականության մասին, որի նպատակն է մտավոր հետամնաց նախադպրոցականների մոտ՝ փոխօգնության և ապրումակցման դրսևորումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը և դրանք զարգացնելու ուղիների հայտնաբերումը: Այս հիմնահարցը պատահականորեն չի ընտրված մեր կողմից, քանի որ հոգեբանամանկավարժական հետազոտություններում բնութագրելով բնականոն զարգացող երեխաների բարոյական դաստիարակությունը, որպես չափանիշ նշվում են նրանց բարյացակամ վերաբերմունքը շրջապատի հանդեպ, կարեկցելու ընդունակությունը, օգնության հասնելու պատրաստակամությունը:

Փոխօգնությունն ու կարեկցանքը դիտվում են որպես անձնավորության առանցքային բարոյական հատկանիշներ, որոնք պայմանավորում են նրա մարդասիրական ուղղվածությունը շրջապատի հետ շփվելիս (Տ. Ի. Բաբաևա, Տ. Ի. Գավրիլովա, Ի. Ս. Դյումինա):

Այս ամենն էլ պայմանավորել է մեր ընտրությունը՝ ուսումնասիրել մտավոր հետամնաց ավագ նախադպրոցականների փոխօգնության և ապրումակցման դրսևորումների հիմնահարցը:

Մենք ենթադրում ենք, որ ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների մոտ փոխօգնության և ապրումակցման կարողությունների դաստիարակման նպատակով կարող են կիրառվել բարոյական, էթիկական չափանիշը: Ընդորում նպատակահարմար է կիրառել խնդիրների փուլային բարդացման եղանակը՝ սկսած բարոյական չափանիշների մասին տարրական

պատկերացումների ձևավորումից մինչև այդ չափանիշների բովանդակության աստիճանաբար, հետևողական հարստացումը և դրանց կիրառումը մտավոր հետամնաց նախադպրոցականների վարքի կարգավորման գործում: Դաստիարակն իր գործունեության ընթացքում պետք է կիրառի հնարներ և միջոցներ, որոնք ուղղված կլինեն մտավոր հետամնաց երեխաների կողմից ձեռք բերված բարոյաէթիկական գիտելիքների իմաստավորմանը, այդ իրավիճակները հայտնաբերելու և հասկանալու, գործնականում բարոյական գործողություններ և արարքներ կատարելու կարողության ձևավորմանը:

Տվյալ հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ փոխօգնության և ապրումակցման դրսևորումների հիման վրա այստեղ ընտրված և հարմարեցված են (ադապտացված) մեթոդիկաներ, որոնք ուղղված են մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումների և իրական վարքագծի առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Մեզ հնարավորություն է ընձեռվում՝ ստանալու մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական զարգացման առանձնահատկությունները բնութագրող նոր տվյալներ: Կբացահայտվեն ինտելեկտի խանգարում ունեցող երեխաները և նրանց նորմալ զարգացող հասակակիցների բարոյական զարգացման ընդհանրությունները: Միաժամակ ցույց կտրվեն մտավոր հետամնաց նախադպրոցականների կողմից բարոյական գիտելիքների յուրացման, բարոյական արարքների և դրանց մոտիվների (դրդապատճառների) որոշ յուրահատկությունները: Մասնագիտական գրականության մեջ տրված ցուցումների հիման վրա կմշակվեն, փորձարարական եղանակով կփորձարկվեն մտավոր հետամնաց նախադպրոցականների մոտ փոխօգնության և ապրումակցման կարողությունների դաստիարակման մեթոդները, պայմաններն ու միջոցները:

Մեր ուսումնասիրության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մեր կողմից կմշակվեն հատուկ մանկավարժական մոտեցումներ մտավոր հետամնաց ավագ նախադպրոցականների մոտ փոխօգնության և կարեկցողության դաստիարակման ու դրա հիման վրա կպատրաստվեն առաջարկություններ այս երեխաների հետ աշխատող մանկավարժների և դաստիարակների համար անհրաժեշտ է.

- պարզել դիտարկվող հիմնախնդրի տեսական ուսումնասիրվածության մակարդակը
- որոշել այս երեխաների հետ աշխատող դաստիարակների և մանկավարժների տեղեկացվածության աստիճանը՝ կարեկցողության և փոխօգնության դաստիարակման հարցում
- հանրապետության հատուկ (օժանդակ) դպրոցներում, ներառական և մասսայական մանկապարտեզներում մտավոր հետամնաց երեխաների մոտ փոխօգնության և ապրումակցման դաստիարակման վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումների բնութագրում

- ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների մոտ փոխօգնության և կարեկցողության դաստիարակման մեթոդների, միջոցների և պայմանների ընտրում, մշակում:

Որպես հետազոտման մեթոդներ՝ մեր կողմից կիրառվել են մանկավարժական, հոգեբանական գիտամեթոդական գրականության ուսումնասիրումը, վերլուծությունը, ծանոթացումը փորձարկվողների բժշկական փաստաթղթերի հետ, ուսումնասիրվող խնդրի շուրջ մասսայական և ներառական նախադպրոցական հիմնարկությունների հատուկ (օժանդակ) դպրոցների աշխատանքային փորձի վերլուծությունը: Հատուկ տեղ է հատկացվել մեր կողմից հետազոտման փորձարարական հաստատող և ձևավորող մեթոդներին:

Առաջին դեպքում դա մտավոր հետամնաց նախադպրոցականների ապրումակցման և փոխօգնության կարողությունների զարգացման մակարդակի, դրանց դրսևորման պայմանների, խանգարումների պատճառների բացահայտումն է: Իսկ ձևավորող մանկավարժական փորձի (էքսպերիմենտի) օգնությամբ ստուգվել է հետազոտման առջև դրված խնդիրների լուծման համար նախատեսված առաջարկվոր միջոցների, մեթոդների և պայմանների արդյունավետությունը: Երեխաների կողմից ստացված գիտելիքները, կարողություններն ու հմտությունները հասակակիցների հետ շփվելու ընթացքում՝ գործնականում կիրառելու նպատակով մշակում և փորձարկում են հատուկ առաջադրանքներ, վարժություններ, խաղային իրավիճակներ:

Անցկացրած փորձերի արդյունքում պարզվել է, որ ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների կարեկցողության և փոխօգնության դրսևորումներն ունեն մի շարք յուրահատկություններ՝ վարքի կանոնների և նորմերի ոչ բավարար իմաստավորում, էթիկական իրավիճակները զգալու և հասկանալու անկարողություն, ցանկալի և իրական վարքի հակասություն:

Նույնպես բացահայտվել է, որ ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների կարեկցողության և փոխօգնության արտահայտման առանձնահատկությունները մեծամասամբ պայմանավորված են մտածողական պրոցեսների անբավարարությամբ և ընկալման յուրահատկությամբ: Իսկ կարեկցողություն և փոխօգնություն դրսևորելու կարողությունների և գործնական հմտությունների բացակայությունը կապված է դրանց ձևավորման աշխատանքների ոչ էֆեկտիվ դրվածքի հետ:

Մտավոր հետամնաց ավագ նախադպրոցականների մոտ կարեկցողության և փոխօգնության կարողությունների և հմտությունների զարգացման արդյունավետ ուղիներից է բարոյական չափանիշի վրա հիմնված նպատակաուղղված շտկողադաստիարակչական աշխատանքը:

Հետազոտության արդյունքները հետագայում կներդրվեն ներառական և մասսայական նախադպրոցական հիմնարկների գործնական աշխատանքներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гаврилушкина О. П., Соколова Н. Д. Воспитание и обучение умственно отсталых дошкольников. –М.– 1977. –220с.

2. Морозова Н. Г. Актуальные проблемы воспитания аномальных детей. – Коррекционно- воспитательная работа в специальных дошкольных учреждениях /Под ред. Н. Г. Морозовой.– М., 1976, с. 3-12.

3. Кузнецова Г. В. Особенности понимания речи окружающих взрослых умственно отсталыми дошкольниками.– Дефектология, 1978, №2, с. 67.

РЕЗЮМЕ

ФОРМИРОВАНИЕ ВЗАИМОПОМОЩИ И ЭМПАТИИ У ДОШКОЛЬНИКОВ С НАРУШЕНИЯМИ УМСТВЕННОГО РАЗВИТИЯ

Яйлоян А. В.

Преподаватель кафедры педагогики и социальной работы Гюмрийского государственного педагогического института имени Микаэла Налбандяна, кандидат педагогических наук

Григорян Н.П.

Преподаватель кафедры педагогики и социальной работы Гюмрийского государственного педагогического института имени Микаэла Налбандяна, кандидат педагогических наук

В статье раскрываются особенности проявления эмпатии и взаимопомощи у умственно отсталых детей старшего дошкольного возраста. Показано, что одним из эффективных путей формирования этих нравственных качеств является целенаправленная коррекционно-развивающая работа, проводимая с ними.

SUMMARY

FORMATION OF SUPPORT AND EMPATHY AMONG PRESCHOOL CHILDREN WITH MENTAL IMPARIMENTS

Yayloyan A.V.

Lecturer at the Chair of Pedagogy and Social work, Mikael Nalbandyan State Pedagogical institute Gumri, Candidate of Pedagogical Sciences

Grigoryan N.P.

Lecturer at the Chair of Pedagogy and Social work ,Mikael Nalbandyan State Pedagogical institute Gumri, Candidate of Pedagogical Sciences

The article illustrates the specific demonstration of empathy and self support among preschool age mentally retarded children. It is shown that one of effective ways of formation of these moral qualities is the purposeful correctional developing work which is carried out with them.